ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Հռիփսիմե Մելիքյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ք. Ուլցին (Մոնտենեգրոյի Հանրապետություն) 2024 թվականի հունիսի 4-7-ը

3. Հրավիրող կողմը

Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոնի կողմից կազմակերպված՝ Համաշխարհային բանկի, Ավստրիայի և Շվեյցարիայի կառավարությունների կողմից համատեղ մշակված հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ներկայացման (PULSAR) ծրագրի հերթական աշխատաժողովին:

5. Քննարկված թեմաները

- Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման և հանրային ներդրումների ու ակտիվների կառավարման միջև կապերը,
- Հանրային հատվածի կազմակերպություններում իրականացվող բարեփոխումների շրջանակում ներքին և արտաքին աուդիտորների դերը,
- Հանրային հատվածի կազմակերպությունների ստանդարտների միջազգային խորհրդի վերջին նորությունների և իրադարձությունների ներկայացում,

- Կորեայի հանրային ֆինանսների ինստիտուտի (KIPF) կողմից ներկայացված՝ «Կայուն հաշվետվողականության ազդեցությունը Հանրային հատվածի կազմակերպությունների վրա» զեկույցի քննարկում,
- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ներկայացման (PULSAR) ծրագրի հետագա քայլերի քննարկում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են ծրագրի շահառու երկրներում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտի բարեփոխումների ընթացքը, հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում կատարված վերջին փոփոխությունները և զարգացումները, արդի հիմնախնդիրները: Ներկայացվել են հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներում կատարված փոփոխությունները, ինչպես նաև քննարկվել են Հայաստանում և Ուկրաինայում ավարտվող, իսկ Վրաստանում նոր մեկնարկած հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի գնահատման (PULSE) ծրագրի ներկա կարգավիճակը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ընթացքում առաջարկություններ են ներկայացվել հաջորդ աշխատաժողովի ընթացքում քննարկման ենթակա թեմաների ու ուղղությունների վերաբերյալ, որոնք առավել հետաքրքրություն և կարևորություն են ներկայացնում PULSAR ծրագրի մասնակից երկրների մասնագետների և մասնագիտական համայնքի համար:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Հունիսի 10, 2024թ.